Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Պ-584-20.04.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 401-րդ հոդվածում «0.075» թիվը փոխարինել «0.04» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասը «500 հազար» բառերից առաջ լրացնել «1 միլիոն» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է 2020 թվականի ապրիլի 21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաեւ այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչեւ օրենքն ուժի մեջ մտնելը:

Սույն օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափը կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելու համար:

Տեղեկանք նախագծի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

~~Առաջին~~երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Պ-584-20.04.2020-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 401-րդ հոդվածում «0.075» թիվը փոխարինել «0.04» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասը «500 հազար» բառերից առաջ լրացնել «1 միլիոն» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է 2020 թվականի ապրիլի ~~20~~21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

~~Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող~~2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաեւ այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչեւ օրենքն ուժի մեջ մտնելը:

Սույն օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափը կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելու համար:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ Պ-584-20.04.2020-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին պարբերություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «2020 թվականի ապրիլի 20-ից հետո» բառերը փոխարինել «2020 թվականի ապրիլի 21-ից» բառերով,	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող» բառերը փոխարինել «2020 թվականի ապրիլի 21-ից» բառերով,	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3, 1-ին կետ**	Համապատասխան փոփոխություն նախատեսել սոցիալական վճարի գծով ժամկետանց պարտավորությունների մասով հաշվարկվող տույժի չափի մասով, հաշվի առնելով, որ եկամտային հարկը և սոցիալական վճարները հաշվառվում են հարկային մարմին ներկայացվող նույն՝ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկների հիման վրա: Կից ներկայացվում է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	<<Բարգավաճ հայաստան>> խմբակցություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի	Ընդունվել է:	Չի ընդունվել

			հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 401-րդ հոդվածում 1) «0.075» թիվը փոխարինել «0.04» թվով, 2) լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով. 4. Սույն հոդվածով սահմանված արարքները արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում կատարելու դեպքում հարկ վճարողը կամ հարկային գործակալը ազատվում է պատասխանատվությունից: 5. Արտակարգ իրավիճակի հիմքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում արգելվում է սույն հոդվածով սահմանված տույժերի հաշվարկումը և կիրառումը հայտարարված արտակարգ դրության և դրա ավարտից հետո 3 ամսվա ընթացքում:		

5.	<<Բարգավաճ հայաստան>> խմբակցություն	Նախագիծը լրացնել նոր՝4-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝4-րդ հոդվածով հետևյալ խմբագրությամբ. Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել նոր՝459-րդ հոդվածով. Հոդված 459. Օրենսգրքի 401-րդ հոդվածին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը Սույն օրենսգրքի 401-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնները ունեն հետադարձ ուժ:	Ընդունվել է:	Չի ընդունվել